ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. ԵՐԵՎԱՆ 2 մարտի, 2011թ.

<<ՀՀ - ում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման դերն ու կարևորությունը>> խորագրով սեմինարի վերաբերյալ

Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) հիմնման պահից՝ 20-րդ դարի երկրորդ կեսից մարդկությունը ձեռնամուխ եղավ աշխարհում միասնական և համադրելի սահմանումներով, դասակարգումներով և մեթոդաբանությամբ հաշվառման համակարգերի ձևավորմանը և վիճակագրության վարմանը: Հիշատակվածը վերագրվում է մարդկային գործունեության բոլոր ոլորտներին, այդ թվում, դրանցից կարևորագույններից մեկը հանդիսացող գյուղատնտեսությանը:

Գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալները հավաքագրվում են ինչպես ընթացիկ (տարեկան) հաշվառումների՝ վարչական ռեգիստրներ և ընտրանքային դիտարկումներ, այնպես էլ, գյուղատնտեսական համատարած հաշվառումների միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալները հավաքագրվում են միայն ընթացիկ հաշվառումների միջոցով, իսկ գյուղատնտեսական համատարած հաշվառում, որպես այդպիսին, երբևիցե չի իրականացվել:

Գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղատնտեսական նշանակության շինությունների, առկա ներուժի (մարդկային, նյութական) և դրանց օգտագործման վերաբերյալ, հավաքագրման, մշակման և տարածման վիճակագրական գործառույթ:

Սույն հաշվառման իրականացումը Հայաստանի Հանրապետությունում, հնարավորություն կընձեռի ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական

տվյալների ամբողջական համակարգ, գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, կատարելագործել ընտրանքային վիճակագրական գործիքները, ապահովել դրանց համադրելիությունը գործող միջազգային չափանիշներին ու չափորոշիչներին և բացահայտել տարիների ընթացքում գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները:

Գյուղատնտեսական համատարած հաշվառումները կարևորվում են նաև այն տեսանկյունից, որ վիջիններիս իրագործման արդյունքում հավաքագրված վիճակագրական տվյալներն օգտագործվում են ներքոհիշյալ բնագավառներում դիտազննումային (մոնիթորինգային) ցուցանիշների համակարգերի ձևավորման համար.

- աղքատության դիտազննում՝ բնակչության զգալի հատվածը բնակվելով գյուղական բնակավայրերում, բախվում է այնպիսի սուր հիմնախնդիրների հետ, ինչպիսիք են՝ բնակավայրերի մեկուսացվածությունը, ենթակառուցվածքների թերի զարգացվածությունը, աշխատանքի տեղավորվելու սահմանափակ հնարավորությունները, շուկաներին հասանելիության սահմանափակությունը և այլն,
- պարենային անվտանգության դիտազննում՝ պարենի առկայություն, պարենի հասանելիություն, պարենի մատակարարման կայունություն, ինչպես նաև, տնտեսական, սոցիալական և բնապահպանական ցուցանիշներ և այլն,
- գյուղատնտեսության ծրագրավորումը և այդ ոլորտում քաղաքականության մշակումը՝ գյուղատնտեսության ոլորտի տնտեսությունների գործունեության ընդհանուր նկարագիրը՝ դրանց պատկանող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները (տարածությունները), կենդանիների գլխաքանակն ըստ տեսակների, զբաղվածությունը և այլն,
- գենդերային վիճակագրության վարումը,
- ընթացիկ վիճակագրության որակի բարելավումը,
- սպառողներին առավել ընդգրկուն տեղեկատվության տրամադրումը և այլն:

Աշխարհում գյուղատնտեսական համատարած հաշվառումների կազմակերպման և իրականացման գործում իր մեծ ներդրումն ունի ՄԱԿ–ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, որն իր հիմնադրման օրվանից օժանդակել է ՄԱԿ–ի անդամ երկրներին գյուղատնտեսական համատարած հաշվառումների իրականացման գործում: Այդ կապակցությամբ մշակվել են 1950; 1960; 1970; 1980; 1990; 2000 և 2010 թվականների

համաշխարհային գյուղատնտեսական համատարած հաշվառումների իրականացման ծրագրեր, որոնցում արտացոլվել են անհրաժեշտ սահմանումները, հիմնադրույթները, ստանդարտները և ղեկավարման սկզբունքները, նպատակ հետապնդելով համաշխարհային մասշտաբով ապահովելու գյուղատնտեսության վերաբերյալ միասնականացված և համադրելի մեթոդաբանությունների օգտագործումը, օժանդակումը ազգային մակարդակով վիճակագրական ծառայություններին գյուղատնտեսության վիճակագրության ոլորտում կարողությունների ամրապնդմանը և դրանով իսկ նպաստելով գյուղատնտեսության ոլորտում քաղաքականություն մշակող և կենսագործող մարմինների գործունեությանը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով 2008թ. ընդունվեց Հայաստանի Հանրապետության օրենքը <<Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին>>, որը համապատասխանում է միջազգային պրակտիկայում ընդունված մեթոդաբանական մոտեցումներին: Մասնավորապես՝ գյուղատնտեսական համատարած հաշվառումներն իրականացվում են զուտ վիճակագրական նպատակներով, տասը տարին մեկ անգամ, տվյալները հավաքագրվում են անմիջապես գյուղատնտեսական մթերք արտադրող ֆիզիկական և իրավաբանական անձանցից, տվյալների տրամադրումը կրում է պարտադիր բնույթ, հավաքագրված տվյալները մշակվում, անվանազերծվում ու հրապարակվում են ամփոփ տեսքով և այլն:

Սույն օրենքը մշակվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ, որի նախապատրաստման ժամանակ մեծ օժանդակություն են ցուցաբերել ՄԱԿ–ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետները:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացման կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը, որում ստեղծված նոր արժեքի մասնաբաժինը համախառն ներքին արդյունքի ծավալում կազմում է շուրջ 16-20%, իսկ զբաղվածների թվաքանակը՝ ընդհանուր զբաղվածների շուրջ 45 % (մոտ 492 հազ. մարդ): Ոլորտում առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից միայն գյուղացիական տնտեսությունների (գյուղաբնակ տնային տնտեսությունների) քանակը կազմում է մոտ 340 հազար (նրանց

բաժին է ընկնում գյուղատնտեսության համախառն արտադրանքի մոտ 90%-ը) և որոնց բնութագրական է՝ փոքր չափերը, ներտնտեսային հաշվառման բացակայությունը, ապրանքայնության ցածր մակարդակը (արտադրանքի 45%-ը սեփական սպառմանն է միտված, 20%-ը՝ բնամթերային վճարումներին և փոխանակումներին և, միջինը միայն 35%-ն է դրամայնացվում), մասնագիտացման ցածր աստիճանը, ներդրումների և եկամուտների փոքր, սահմանափակ չափերը և այլն:

Վերը նշվածով պայմանավորված էլ սույն սեմինարի նպատակն է հանրությանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության համար գյուղատնտեսական համատարած հաշվառման իրագործման կարևորությունը, ներկայացնելով Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ և այլ երկրների փորձը նշված հաշվառման բնագավառում:

Պարզաբանումների համար տեղեկատու՝
☎ 52 45 42 Վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժին

Հավելված

Հայաստանի վիճակագրություն

Վիճակագրական կարողությունների համաթիվ

ամփոփ նկարագիր. Հայաստան

The World Bank

Statistical Capacity Indicator Summary Description
Armenia

View detailed description

2010 Statistical Capacity Indicator (on a scale of 0-100)		
Indicator	**Armenia**	**All Countries****
Overall	93	65
Methodology	100	56
Source Data	80	62
Periodicity & Timeliness	100	78

Methodology (2010)	Status	Value	Weight	Score
National accounts base year	Annual chain linking or base year within last 10 years	1	10	10
Balance of payments manual in use	Using BPM5	1	10	10
External debt reporting status	Actual or preliminary	1	10	10
Consumer price index base year	Base year within last 10 years	1	10	10
Industrial production index	Available monthly/quarterly	1	10	10
Import and export price indexes	Available monthly/quarterly	1	10	10
Government finance accounting	Accounts consolidated	1	10	10
UNESCO reporting	At least 3 times in last 4 years	1	10	10
National immunization coverage	Consistent with WHO/UNICEF	1	10	10
Special Data Dissemination Standard	Subscribes	1	10	10
			TOTAL Methodology (All Countries=56)	**100**

Source Data (2010)	Status	Value	Weight	Score
Population census	Periodicity of 10 years or less	1	20	20
Agricultural census	Periodicity longer than 10 years	0	20	0
Poverty survey	Periodicity of 3 years or less	1	20	20
Health survey	Periodicity of 3 years or less	1	20	20
Vital registration system coverage	Complete	1	20	20
			TOTAL Source Data (All Countries=62)	**80**

Periodicity & Timeliness (2010)	Status	Value	Weight	Score
Income poverty	Periodicity of 3 years or less	1	10	10
Child malnutrition	Periodicity of 3 years or less	1	10	10
Child mortality	National/international estimate is available for reference years	1	10	10
Immunization	Periodicity of 1 year	1	10	10
HIV/AIDS	National/international estimate is available for reference years	1	10	10
Maternal health	Periodicity of 3 years or less	1	10	10
Gender equality	Indicator observed for at least 5 out of 5 latest years	1	10	10
Primary completion	Indicator observed for 5 out of 5 latest years	1	10	10
Access to water	Indicator observed for 2 out of 6 latest years	1	10	10
Per capita GDP growth	Periodicity of 1 year	1	10	10
			TOTAL Periodicity & Timeliness (All Countries=78)	**100**

*** All countries include low- and middle-income IDA/IBRD countries with a population of over 1 million.*

© 2009 The World Bank Group, All Rights Reserved.

http://ddp-ext.worldbank.org/ext/CSIDB/getCountryStatInfoXML?id=51&format=CSIDBSCORE3

Ըստ Համաշխարհային Բանկի վիճակագրական կարողությունների համաթվի, Հայաստանի ընդհանուր ցուցանիշը կազմում է 93, որի հիմքում են ընկած մեթոդաբանություն՝ 100, տվյալների աղբյուրներ՝ 80, պարբերականություն՝ 100: Տվյալների աղբյուրներում 20 միավորի պակասը պայմանավորված է Գյուղատնտեսության համատարած հաշվառման բացակայությամբ: